ՀՈԴՎԱԾ 3
Կողմերը իրենց իրավասությունների շրջանակներում կնպաստեն փոխհարաբերությունների զարգացմանը հետեւյալ ուղղություններով
- սոցիալական հարաբերություններ
-մշակութային եւ կրթական հարաբերություններ
- տնտեսական և առևտրային հարաբերություններ
-զբոսաշրջային հարաբերություններ

ՀՈԴՎԱԾ 4
Կողմերը պարտավորվում են իրենց իրավասությունների սահմաններում փոխանակել տարբեր տիպի սոցիալական միջամտությունների մասին տեղեկություններ՝ գործընթացին ինտեգրելով ամենախոցելի խավերին

ՀՈԴՎԱԾ 5
Կողմերը պարտավորվում են կազմակերպել և պահպանել բարեկամություն իրենց համապատասխան դեսպանատների հետ, այն բոլոր նախաձեռնությունները, ինչ վերաբերվում է միմյանց գիտելիքի և մշակույթի տարածմանը : Մասնավորապես կողմերը պարտավորվում են

- նպաստել առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը
- զարգացնել զբոսաշրջությունը
- օժանդակել և հնարավոր դարձնել շփումը դպրոցների միջև
- օժանդակել և կազմակերպել խորհրդաժողովներ՝ հաշվի առնելով թեմաների փոխադարձ հետաքրքրությունը
- գրքերի, տուրիստական ամսագրերի և հրատարակությունների փոխանակում
- ցուցահանդեսների կազմակերպում /նկարչություն, լուսանկարչություն, խեցեգործություն, քանդակագործություն կամ այլ գեղարվեստական բնույթի ցուցահանդեսներ /
- մասնակցություն բարեգործական տոնավաճառներին /կամ այլ միջոցառումներ, որտեղ կներկայացվեն իրենց տարածքները, իրենց ավանդույթները և տարբեր արտադրողական սեկտորներին բնորոշ ապրանքներ

ՀՈԴՎԱԾ 6
Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից եւ գործելու է 5 տարի ժամկետով: Համաձայնագրի գործունեության ժամկետի ավարտից հետո կողմերի փոխադարձ համաձայնությամբ կարող է կնքվել նոր համաձայնագիր:

Հուշագիրը ստորագրում են՝

Ի դեմս ՀՀ Գեղարքունիքի մարզի
Գավառի քաղաքապետ՝

______________/Գ.Ե.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ /

Կ.Տ.

Ի դեմս Ռ.Դ. Կրասնոդարի երկրամասի
Նովոռոսիյսկի քաղաքապետ

/Վ.Ի.ՍԻՆՅԱԳՈՎՍԿԻ /

Կ.Տ

______________2009թ. Ռ.Դ. Կրասնոդարի երկրամասի Նովոռոսիյսկ քաղաք